ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

SUPREME PATRIARCH
CATHOLICOS
OF ALL ARMENIANS
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴՒՈՑ ՄԵՐՈՑ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿԱՑ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ
ԱՆԴԱՄՈՑՆ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅՆ
ԿԱՆԱԴԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ, ՈՐ Ի ՎԱՆՔՈՒՎԸՐ, ԿԱՆԱԴԱ

Կանադայի Հայոց Թեմի տարեկան Պատգամաւորական ժողովի առիթով ջերմ ողջոյնով Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք յղում ժողովի բոլոր մասնակիցներիդ, որ գլխաւորութեամբ Թեմական առաջնորդ Գերաշնորհ Տ. Աբգար Եպիսկոպոս Հովակիմեանի, միաւորուել էք կանադահայութեան կեանքին առնչուող խնդիրները քննութեան առնելու և թեմի գործունէութիւնը առաւել արդիւնաւոր դարձնելու նպատակով:

Աշխարհի տարբեր ծայրերում բնակութիւն հաստատած հայորդիները մեր Եկեղեցու հովուական խնամատարութեամբ անխախտ են պահպանել իրենց ազգային ու հոգևոր ինքնութիւնը, շարունակաբար հաղորդուել մեր հայրերի նուիրական ժառանգութեանը: Գրեթէ բոլոր հայաշատ բնակավայրերում կառուցուել են եկեղեցիներ, որոնց շուրջ Մեր զաւակները միաւորուել ու դարձել են հաւատի մեծ ընտանիք, որի ամուր ու անխախտ հիմքը սէրն է առ Բարձրեալն Աստուած, առ ազգն ու հայրենիքը հայոց:

Գոհունակութիւն է Հայրապետիս համար հաստատել, որ կանադահայութեան կեանքը ևս կառուցուած է մեր Սուրբ Եկեղեցու շուրջ, որի տիրաւանդ առաքելութիւնը դուք, սիրելիներ, ջանում էք առաւելագոյնս արդիւնաւորել, որպէսզի մեր Եկեղեցին շարունակի խնամել և հոգատարել իր զաւակներին, նրանց կեանքը լցնել Աստուծոյ խօսքով, Աստուծոյ օրհնութեամբ ու շնորհներով: Կանադահայ համայնքի ձեռքբերումներն ու յաջողութիւնները, որ ուրախացնում են մեզ, արդիւնքն են թեմի հոգևոր դասի հաւատարիմ սպասաւորութեան և ազգանուէր հայորդիներիդ ազնիւ յանձնառութիւնների: Թեմական ու ծխական խորհուրդների, տիկնանց ու երիտասարդաց միութիւնների ու թեմական այլ կառոյցների կազմերում նախանձախնդիր գործունէութեամբ Դուք Աստուծոյ անունն էք փառաւորում և գովարժան ջանքեր բերում, որ մեր ժողովրդի զաւակները առաւել կապուեն մեր Եկեղեցուն, ներգրաւուեն համայնքային կեանքի մէջ, կրողը լինեն մեր ազգային իղձերի ու տեսիլքների: Մենք բարձօրէն գնահատում ենք Ձեր վաստակը մեր Եկեղեցու կեանքում, գնահատում ենք Ձեր սէրն ու նուիրումը՝ հանդէպ մեր ժողովուրդը:

Առ Աստուած աղօթքով Բարձրեալի օրհնութիւնն ու զօրակցութիւնն ենք հայցում ձեզ և յաջողութիւններ մաղթում Պատգամաւորական ժողովի աշխատանքներին: Մեր յորդորն է, որ ձեր միասնական աշխատանքով առաւել

շէնացնէք Կանադայի Հայոց Թեմը՝ ի բարօրութիւն կանադահայ աստուածասէր Մեր զաւակների: Շարունակէք նաև ձեր բարի աւանդը բերել ազգային մեր իղձերի իրականացմանը, մեր Հայրենիքի՝ Հայաստանի և Արցախի զօրացմանը և աստուածպարգև մեր երկրում խաղաղ և օրինեալ կեանքի կառուցմանը:

Թող Տէրը հանապազ օրհնութեամբ անսասան պահի Կանադայի Հայոց Թեմը և Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան յ8-ն Մայիսի
յամի Տեառն 2018 և ի թուին հայոց ՌՆԿԷ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 1855